

ԱՐԹՈՒՐ ՄԻՄՈՆՅԱՆ

Տ Ի Տ Ա Ն Ի Կ

2010

ԴՏՅ 2
ԳՄԴ 86.3
Ս 504

Մարդկությունը փրկության կարիք ունի. ով
էլ որ լինես, դու փրկության կարիք ունես:
Այսօր այդ փրկությունը հասել է քեզ:

Արթուր Սիմոնյան
Տիտանիկ

© «Կյանքի Խոսք» հրատարակչություն,
2010

ISBN 5-550-01181-6

Հիմա առավել, քան երբևէ,
մենք կարող ենք նկատել,
որ մարդկությունը փրկության
կարիք ունի: Ամեն մեկը ինչ-որ
բանից փրկվելու կարիք ունի.
մեկը՝ հիվանդությունից,
մյուսը՝ կռիվներից, մեկը՝
վեճերից, բամբասանքից,
մյուսը՝ բանտից,
մեկ այլը՝ սխալ ընկերներից ու
դժոխքից: Մարդը պիտի լինի
փրկված, և
այդ փրկությունն այսօր
հասել է մեզ...

ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ

Մարդկությունը փրկության կարիք ունի: Այդ փրկության անունն է Հիսուս Քրիստոս:

Ի՛նչ բարեկամ, ես հավատում եմ, որ այդ անունը կդառնա ամենաթանկը քո կյանքում:

Հիսուս Քրիստոս նշանակում է Օժյալ Փրկիչ, այսինքն՝ օծված՝ փրկելու համար:

«Եվ այս ամենը եղավ, որ կատարվի մարգարեի ձեռով Տիրոջ ասածը, որ ասում է. «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և նրա անունն էմանուել կկանչեն, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ»: Եվ Հովսեփը, քնից զարթնելով, այնպես արեց, ինչպես Տիրոջ հրեշտակը հրամայեց իրեն, և առավ իր կնոջն իր մոտ: Եվ չգիտեր նրան, մինչև նա իր անդրանիկ որդին ծնեց և նրա անունը կոչեց Հիսուս»

(Մատթ. 1.22-25):

Այսպես եղավ Հիսուսի ծնունդը: Գիտե՞ք այստեղ որն է կարևորը: Այն, որ Նա չմնաց

Մարիամի գրկում՝ խանձարուրի մեջ, ինչպես պատկերված է սրբապատկերներում: Չգիտես ինչու մարդկությունն այսօր Չիսուսին փնտրում է բարուրի մեջ կամ խաչի վրա: Նա ո՛չ գոմում է, ո՛չ էլ խաչի վրա: Չիսուսը չմնաց մանուկ, Նա մեծացավ, Նա խաչվեց մեր մեղքերի համար, հարություն առավ՝ մեզ արդարացնելու համար, և համբարձվեց երկինք՝ բարեխոսելու համար:

Եթե դու պաշտում ես Չորը, Որդուն՝ Չիսուս Փրկչին, և Սուրբ Չոգուն, դու ճշմարիտ հավատացյալ ես, կենդանի Աստծո զավակ:

Շատերը, գտնվելով զանգվածային լրատվական միջոցների և հեռուստահաղորդումների ազդեցության տակ, չեն տարբերում աղանդը ճշմարիտ քրիստոնեությունից: Նույնիսկ ժամանակի ազդեցիկ շատ հոգևոր առաջնորդներ համաշխարհային ճանաչում վայելող միջնադարյան հոգևորական, գրող-բանաստեղծ, փիլիսոփա Նարեկացուն աղանդավոր էին համարում: Իսկ ի՞նչ է աղանդը: Աղանդը այն կրոնական խումբն է, որը շեղվել է Երեք տիեզերածողովների արդյունքում սահմանված հավատքի դավանությունից և վարդապետությունից:

Միրելիս, ես չեմ ուզում, որ դու լինես խավարի մեջ, այլ որ իմանաս ճշմարտությունը. նա, ով ընդունում է Յորը, Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն, և պաշտում ու ծառայում է Նրանց, աղանդավոր չէ:

Մարդիկ ծանոթ չեն Աստծո նամակներին, այսինքն՝ Աստծո Խոսքին, որտեղ գրված է՝ չար բանը քեզ չի՛ մոտենա, դու կլինես պաշտպանված, եթե մեռնես էլ, կապրես (տես Սաղմ. 91, Հովհ. 11. 25): Այս ամենի փոխարեն նրանք լսում են, թե ինչ են հուշում հորոսկոպները: Նրանք չեն տարբերում մոլորությունը ճշմարիտ քրիստոնեությունից:

Ամեն տարեմուտին՝ գիշերվա Ժ.24⁰⁰-ին, համարյա բոլոր հեռուստաալիքները, հորոսկոպներից ներշնչված, հռչակում են ինչ-որ մի կենդանու անուն՝ իբրև այդ տարվա տեր: Օրինակ՝ հայ ազգը 2000 թվականը հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով, տոնական սեղանների շուրջ հռչակեց վիշապի տարի՝ հույս ունենալով, որ վիշապը իրենց լավ կյանք կտա: Լսողների 85%-90%-ը ընդունեց այդ մոլորեցնող գաղափարը: Եվ շատերը կենդանի Աստծուն թողած՝ ընդունում են օտար աստվածների: Այն մարդը, ով հեռուստատեսու-

թյամբ հայտարարում է, որ այս տարի վիշապի տարի է, դժվար թե ցանկանար, որ վիշապը ողջ տարվա ընթացքում իր ներկայությունը հաստատեր նրա տանը: Իմ աղոթքը այսպիսին է. **«Տե՛ր, եկեղեցու ամե՛ն անդամի և ամե՛ն մարդու բնակարանի ամե՛ն մի անկյունում լինի Քո ներկայությունը, և Քո՛ տարին լինի ամե՛ն մեկի համար»:**

Ցավալին այն է, որ եթե բարեկամներիդ այցելելիս ասես, որ այս տարի քեզ համար Չիսուսի տարի է, նրանք կմտածեն, որ ցնորվել ես, քեզ հետ տարօրինակ բան է կատարվում: Իսկ եթե ասես՝ վիշապի տարին երջանկություն կբերի, նրանք դա նորմալ կընդունեն, քանի որ դու նրանց նման ես մտածում: Աշխարհում բոլորն էլ հավատում են. նայած՝ ով ում և ինչի է հավատում:

Մենք հավատում ենք Չիսուսին, մեր Աստվածը Չինաստանից չէ: Մեր Աստվածը մի՛շտ մեզ հետ է: Մեր Աստվածը երկիրն ու երկինքը Ստեղծողն ու բոլոր արարածների մեջ շունչ Տվողն է: Մենք չենք ընդունում տարբեր ազգերի կողմից տարբեր ժամանակներում ստեղծված աստվածներին:

Մի քանի տարի առաջ ասում էին՝ առնետի տարի է, առնետները մեզ կերջանկացնեն: Ես չգիտեմ որևէ մեկին նրանք երջանկացրե՞լ են, թե՞ ոչ:

Որ աստժո հետ շփվում ես, նրան էլ նմանվում ես: Մեզ համար յուրաքանչյուր տարի Զիսուսի տարին է, մենք ձևավորվում և նմանվում ենք Նրան: Զիսուսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, Նա չի փոխվում: Եթե ոմանց համար մի տարին մվիրվում է առնետների, մի տարին՝ ծիերին, իսկ մյուս տարին՝ վիշապին, մեզ համար բոլոր տարիները Զիսուսինն են: Եվ սովորելով Նրա խոսքերն ու գործերը՝ մեր մեջ ձևավորվում է Զիսուսը:

Չմոռանանք, երբ 1988 թվականը դարձյալ վիշապի տարի էր հռչակվել, Զայաստանի կեսը երկրաշարժից ավիրվեց, մեր ազգը սնանկացավ: Եվ դեռ ասում էին, թե վիշապը երջանկություն կբերի: Բայց երբ ասում ես՝ Զիսուսը երջանկություն կբերի, ասում են. «Օ՛հ, ո՛չ, դուք խելագարվել եք»: Սակայն մեզ համար միշտ Զիսուսի տարի է:

Այն մարդիկ, ովքեր հավատում և ընդունում են վիշապին կամ այլ կենդանակերպին՝ որպես իրենց երջանկացնող, նրանք կուռքերի են պաշտում: Աստվածաշունչն ասում է. «...Նրանք էլ են ընտրել իրենց ճանապարհ-

ները և իրենց սրտին հաճելի են իրենց կուռքերը»

(Եսայի 66.3),

«Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենա՛ս: Քեզ համար կուռք չչինե՛ս, և ոչ վերը՝ երկնքում, կամ ցածը՝ երկրի վրա, կամ երկրի տակի ջրերում եղած բաների մեկ նմանությամբ: Նրանց երկրպագություն չանե՛ս և նրանց չպաշտե՛ս, որովհետև ես՝ քո Եհովա Աստվածը, նախանձոտ Աստված եմ, որ կհատուցեմ հայրերի անօրինությունը որդիների վրա՝ մինչև նրանց երրորդ ու չորրորդ ազգը, որ ատում են Ինձ: Եվ կողորմեմ նրանց մինչև հազար ազգը, որ սիրում են Ինձ և Իմ պատվիրանները պահում են»

(Ելից 20.3-7):

Ես հավատում եմ, որ դու չես ուզում անեծք բերել ազգիդ մեջ՝ հավատալով վիշապին և կենդանակերպերին:

Աստծո հոսքն ասում է նաև՝ մինչև չորրորդ ազգը կհատուցեմ նրանց: Ժամանակն է, որ մենք *վերադառնանք կենդանի Աստծուն*: Աստված ուզում է, որ Ինքը լինի մեր Տերը, մեր երջանկության Աղբյուրը, և ոչ թե վիշապը կամ այլ կենդանիներն ու հորոսկոպները:

ԱՄԵՆԱՊԱՇՏՊԱՆՎԱԾԸ ԵՎ ԱՄԵՆԱՊԱՅՈՎԸ...

Կյանքն այնպիսին է, որ ամեն պահի ինչ-որ վտանգ կարող է սպառնալ: Միակ ապահովությունն Աստծո մեջ է: Սիրելի՛ս, թո՛ղ քո ինքնավստահությունը, հպարտությունը, և մի պահ խորը մտածի՛ր՝ մի՞թե Աստված չէ քո Պահապանը:

Ես ցանկանում եմ քեզ պատմել հռչակավոր «Տիտանիկ» նավի մասին: Ես չեմ կրկնի այն, ինչը դու արդեն գիտես կինոնկարներից կամ մամուլից:

Այսօր ես քեզ մի նոր բան կասեմ:

«Տիտանիկը» Անգլիայի հպարտությունն էր: Անգլիան շատ էր հպարտացել «Տիտանիկի» կառուցումով: Դա, իրո՛ք, վիթխարի նավ էր, այն ժամանակի հրաշքն էր, այդ մասին էր վկայում նաև անվանումը: Ամենուրեք նրա գովազդն էր՝

1. «Տիտանիկը» ամենամեծն է, նրա նմանը չկա:

2. «Տիտանիկը» ամենապաշտպանվածն է:
3. «Տիտանիկը» անխորտակելի է: «Տիտանիկի» նավապետ Սմիթն ասել էր. «Անգամ Աստված չի կարող խորտակել այս նավը»:

Եկավ սպասված օրը: Անգլիայի հպարտությունը դուրս եկավ ճանապարհորդության: Գնապարհորդությունը հրաշալի էր, մարդիկ ցնծության մեջ էին: Օվկիանոսում՝ «Տիտանիկից» մի քանի մղոն առաջ, գտնվում էին «Կալիֆորնիա» և «Կարպատիա» նավերը:

Ճանփորդության չորրորդ օրը՝ երեկոյան Ժ.19³⁰-ին, նավապետը հաղորդագրություն ստացավ, որ առջևում վիթխարի սառցաբեկորներ կան, չանհանգստացավ, որովհետև համոզված էր, որ իր նավը շատ մեծ է ու պաշտպանված: «Տիտանիկը» նույնիսկ չցանկացավ լսել «Կալիֆորնիա» նավի հաղորդագրությունը:

«Ես ամբարիշտը տեսա գոռոզ և տեղը հաստատ, ինչպես լայնատարած դալար ծառ, բայց մեկ էլ անցնելիս ահա չկար նա: Ման եկա նրան, և չգտնվեց»

(Մադ. 37.35,36):

Խոսքն այստեղ հարուստի մասին չէ, այլ ամբարիշտների և հպարտների մասին է, որոնք «Տիտանիկի» պես մտածում են, որ անխորտակելի են:

«Երանի՛ այն ժողովրդին, որ գիտի փողերի ծայնը: Ո՛վ Տեր, նրանք Քո երեսի լույսով կգնան»

(Մաղմ. 89.15):

Մի՞թե 19³⁰-ին նրանց համար չէր հնչել փողի ծայնը:

Գիտե՛ս, փողի ծայնը փրկության ծայն է: Բայց նրանք մերժել էին այդ ծայնը: Աստծո խոսքն ասում է. **«Լսելով կլսե՛ք և չե՛ք լսի»**: Ինչ-որ բան խանգարում էր նրանց լսել փողի ծայնը. ի՞նչն էր դա: Նրանց խանգարում էր մեծամտությունը և անպարտելիության զգացումը. «Մեր նավը մեծ է, շատ լավ պաշտպանված ու երբեք չի խորտակվի»:

Այսօր շատ մարդկանց կարող ենք տեսնել, ովքեր մտածում են, որ իրենք շատ մեծ են, լավ պաշտպանված և անխորտակելի: Որքան էլ լավ պաշտպանված լինես, ոչի՛նչ չես կարող անել, եթե քեզ մահը այցելի: Ո՞վ կարող է քեզ

փրկել: «Տիտանիկը» չընդունեց փողի ձայնը՝ ժ.19³⁰-ի հաղորդագրությունը: Նավապետը մտածեց, որ սառցաբեկորները թույլ նավերի համար են, իսկ իրենցը մեծ է և պաշտպանված, և անգամ Ինքն՝ Աստված, չի՛ կարող խորտակել նավը: Նրանք հպարտորեն շարունակեցին իրենց ճանապարհը: Աստվածաշունչն ասում է. **«Կործանումից առաջ հպարտանում է մարդու սիրտը»:**

Հաճելի գիշեր էր, աստղերը փայլում էին երկնքում, նավի մեջ հնչում էր դասական երաժշտություն, և ամեն մեկը զբաղված էր իր հետաքրքրություններով: Ժ.2340-ին հանկարծ մի հարված զգացին, նավը ինչ-որ բանի բախվեց, երաժշտությունը դադարեց, մարդիկ անհանգստացան՝ ի՞նչ կատարվեց, բայց դա տևեց մի քանի րոպե. հետո ամեն մարդ մտածեց, որ նավը շատ մեծ է, պաշտպանված, և ոչ մի բան չի պատահի, դա ուղղակի սառցաբեկոր էր: Եվ նրանք շարունակեցին իրենց տանգոն: Եթե այդ պահին նրանք մտածեին փրկության մասին, մասնագետներն ասում են, որ նավի վրա գտնվող մարդիկ փրկված կլինեին: Այդ գիշեր օվկիանոսը լիովին հանգիստ սպասում էր՝ դիմավորելու աշխարհի ամենամեծ հպարտությանը:

Հարվածից 10 րոպե անց, նավապետ Սմիթը, ավագ օգնական Ուայլդը և նավը կառուցողը նայեցին նավի վնասված հատվածին և հասկացան, որ հարվածը ճակատագրական է: Այնուհետև նավը կառուցողը կայացրեց իր անառարկելի եզրակացությունը. ««Տիտանիկը» մատնված է կործանման, նավապետ, նույնիսկ Աստված՝ Ինքը, չի կարող օգնել»:

«Տիտանիկը» սկսեց խորտակվել:

Գիշերվա ժամը 215-ին նավի վերջին հատվածը վերջին անգամ երևաց ջրի երեսին և սուզվեց:

Ժամը 2²⁰-ին «Տիտանիկն» այլևս գոյություն չունեի: Օվկիանոսի մեջ մարդկանց մեծ բազմություն էր՝ գոռում էին, գոչում: Ժամը 340-ին ջրերը ծածկվեցին սառած մարմիններով:

«Տիտանիկի» մեծության առասպելը խորտակեց իրեն:

Շատ դեպքերում մարդն այնքան է մեծարում իրեն, որ շրջապատի մարդկանց մոտ սխալ կարծիք է ձևավորվում: Եվ երբ վատ իրավիճակում է հայտնվում, չի գտնվում մեկը, որ օգնության հասնի:

Այսօր ո՛չ ոք պաշտպանված չէ, այսօր ո՛չ ոք մեծ չէ: Ամենամեծը մեր Աստվածն է՝ Հիսուսը:

Խելացի ղեկավարները ծնկի են գալիս Աստծո առաջ և ասում. «Մենք պաշտպանված չենք, պահպանի՛ր մեզ»: Աստվածաշունչն ասում է՝ բոլորը ծնկի կգան Նրա առաջ:

Օվկիանոսում գտնվող «Կալիֆորնիայի» նավապետը համոզված էր, որ «Տիտանիկը» պաշտպանված է, շատ մեծ ու երբե՛ք չի խորտակվի, այդ պատճառով շարունակեց իր ճանապարհը: Իսկ մյուս նավը՝ «Կարպատիան», շրջանցել էր սառցաբեկորները, և երբ «Տիտանիկի» առաջին ազդանշանը տեսավ, նավապետը անմիջապես հրամայեց շրջել նավը և հասնել փրկության: Այդ նավի մասին գրելիս նշում են, որ նավապետը քրիստոնյա հավատացյալ էր, նա հայտնի էր արագ որոշումներ կայացնելու ունակությամբ: Անձնակազմը վկայում էր, որ նա աղոթեց և հայտարարեց մոբիլիզացնել ուժերը: Բժիշկները պատրաստվեցին, խոհանոցը եռաց թեյի և կերակուրի պատրաստությունից, բոլոր սենյակները տաքացվեցին: Հատուկ մարդիկ նշանակվեցին, որպեսզի հետևեն նավի ընթացքին՝ սառցաբեկորներին չբախվելու համար: Նավապետը գիտեր, որ իրենք փոքր են, և պետք է ուշադիր լինեն: Նա արագացրեց իր ընթաց-

քը: Անձնակազմը վկայում էր, որ նավում գտնվող բոլոր ուղևորները «հիվանդացան» բարեգործության զգացումով, բոլորն էլ շտապում էին օգնության հասնել: Նրանք տեղ հասան գիշերվա ժ.400-ին և կարողացան փրկել միայն այն մարդկանց, ովքեր փոքր նավակների վրա էին:

«Տիտանիկը» խորտակվեց, նրա հետ խորտակվեցին նաև մարդիկ, խորտակվեց նաև Անգլիայի հպարտությունը:

«Տիտանիկի» մասին ֆիլմը ամենաշատն է դիտվել: Արդյո՞ք սա մի հեքիաթ է սիրող սրտերի մասին, թե՞ զգուշացնող առակ մեր օրերի համար, որը սրի նման կախված է մոլորակի վրա՝ մինչ մարդկությունը խնջույքների մեջ է:

Ո՛վ էլ դու լինես, ո՛ւր էլ գնաս, դու պաշտպանված չե՛ս, դու կխորտակվե՛ս, եթե չունենաս Հիսուսին: Քեզ չեն փրկի ո՛չ քո պաշտոնը, ո՛չ քո ծառայողական անձնակազմը, ո՛չ քո շրջապատը, ո՛չ քո ֆինանսները, ո՛չ էլ այն հեղինակավոր անձնավորությունը, ում ապավինում ես:

Սիրելի՛ս, ո՞ր նավի մեջ ես դու այսօր գտնվում: Ես քեզ պատմեցի երեք նավի մասին. դա պատահական չէր: Մեկը՝ խորտակ-

վեց ինքնավստահության պատճառով, մեկը՝ հայտնվեց անտարբեր դիտողի դերում, իսկ մյուսը՝ գնաց օգնելու: Ո՞վ է ուզում լինել օգնողի դերում:

Այսօր ժողովրդի 80%-ը խորտակվում է, իսկ 10%-ը դիտում է, և միայն 10%-ն է շտապում՝ նրանց փրկելու: Ե՛կ շատացնենք տոկոսային հարաբերությունն ի օգուտ օգնողների:

«Տիտանիկի» ղեկավարությունն այն աստիճան էր հպարտացած, որ նույնիսկ անհրաժեշտ քանակությամբ փրկարար նավակներ չէր վերցրել: Նրանք չէին մտածում խորտակման մասին, մինչդեռ այդ ժամանակ որքա՛ն անհրաժեշտ էին այդ փոքրիկ նավակները:

Խոսքն ասում է. **«Երանի՛ նրանց, ովքեր փողի ծայնը լսել գիտեն»:** «Տիտանիկի» համար փողի ծայնը մի քանի անգամ հնչեց: Մինչև ծով դուրս գալը՝ առաջարկություն էր եղել շատացնել փրկարար նավակները: Բայց նրանք ասել էին. «Մենք ապահով ենք ու երբեք չենք խորտակվի»: Հետո նրանք ստացել էին հաղորդագրություն սառցաբեկորների վերաբերյալ, սակայն ասել էին. «Դա մեզ չի՛ վերաբերում, դա թույլերի համար է, որովհետև նավը շատ մեծ է ու պաշտպանված»: Այդ նա-

վաստիները շատ անգամ էին բաց ծով դուրս եկել և երբեք նմանատիպ բան չէին տեսել, բայց հանկարծ՝ մի երեկո, հայտնվեցին փաստի առաջ: Սիրելի՛ս, ես քեզ զգուշացնում եմ՝ քո նավը՝ քո կյանքը, շատ է գնացել-եկել ինչոր ճանապարհներով, բայց երբեք սառցաբեկորների չի հանդիպել, սակայն լսի՛ր փողի ձայնը. քո ճանապարհին սառցաբեկորներ կարող են հայտնվել ամեն թույլ:

Ուշադիր եղիր՝ լսելու փողի ձայնը, հիշո՞ւմ եք, Աստվածաշնչում մի մարդ կար՝ Բաղասանունով: Սա միակ պատմությունն է, որտեղ ավանակը խոսում է: Նա ավանակով գնում էր՝ Աստծուն հակառակ մի գործ իրականացնելու: Հանկարծ ավանակը կանգնում է երկու պատերի մեջտեղում և Բաղասամի ոտքը սեղմվում է պատին: Բաղասանը սկսում է ուժեղ ծեծել ավանակին: Գերբնական բան է տեղի ունենում. ավանակը սկսում է խոսել. «Նայի՛ր, չե՞ս տեսնում՝ ով է իմ դիմաց կանգնած»: Բաղասամի աչքերը բացվում են, և նա տեսնում է հրեշտակին՝ ավանակի դիմաց կանգնած: Հրեշտակն ասում է. «Բաղասան, քո ճանապարհը ուղիղ չէ իմ առաջ: Մի քիչ էլ գնայիր՝ կմեռնեիր, փոխի՛ր քո ուղին»:

Ընդունենք, որ ավանակը քո կյանքի խորհրդապատկերն է: Ինչ-որ ժամանակ կյանքդ հաջող էր ընթանում, բայց հանկարծ կանգնեց: Եվ դու ամեն ինչ անում ես, որ կյանքդ առաջ գնա, պարտքեր ես վերցնում, աշխատում ես, որ մի քիչ էլ առաջ գնա, սակայն նա «սեղմում է քո ոտքը»: Դա ցավոտ է, և դու «ծեծում ես քո կյանքին», իսկ նա ասում է. «Լսի՛ր, մի՞թե չես տեսնում, ես քո առաջվա կյանքը չեմ: Բացի՛ր աչքերդ և նայի՛ր՝ ով է կանգնած իմ առջև, մի քիչ էլ գնայի՛ր՝ կմեռնեիր»:

Հնարավոր է, որ ասես՝ մահը ինձ համար չէ: Գնացե՛ք գերեզմանատուն, նայե՛ք երիտասարդների գերեզմաններին՝ գնալով մեծանում է նրանց թիվը: Աստծո խոսքն ասում է. «Մահտարածամեր կլինեն», այսինքն՝ երիտասարդ մահեր կլինեն: Գնացե՛ք և ուշադիր կարդացե՛ք գերեզմանաքարերի վրա. նրանցից շատերը մահանալիս, հավանաբար, ավելի փոքր են եղել քո այսօրվա տարիքից: Գիտե՞ք, նրանք ոչ մեկից էլ վատը չեն եղել: Դու այնտեղ քեզանից գեղեցիկների էլ կտեսնես, կտեսնես քեզանից ուժեղների, քեզանից ավելի շատ պաշտպանվածների: Աստծո խոսքն

ասում է երիտասարդներին. «Հիշե՛ք Աստծուն երիտասարդ օրերում»:

Ժամանակը եկել է դուրս գալու «Կալիֆորնիա» նավից, որն անտարբեր գտնվեց, և գնալ դեպի «Կարպատիա» նավը, որին ես կարող եմ նմանեցնել Հիսուս Քրիստոսի եկեղեցուն:

Աստված ասում է. **«Ձեր տները մի՛ կառուցեք ավազի վրա, այլ կառուցեք ժայռի՛ վրա»** (տուն, այսինքն՝ քո կյանքը): Աստծո խոսքը մի օրինակ է պատմում. մեկը իր տունը կառուցեց ավազի վրա, մյուսը՝ ժայռի վրա: Եթե քննենք, կտեսնենք, որ ժայռի վրա տուն սարքողը ավելի շատ է տանջվել: Հիսուսը, երբ խոսում էր այդ մասին, ոչ մի տեխնիկական ստի չուներ: Մեկը, քարերը քարշ տալով ժայռի վրա, այնտեղ կառուցեց իր տունը, մյուսը՝ ավազի վրա, և չապրեց այն դժվարությունը, որ ժայռի վրա կառուցողն ունեցավ: Հետո եկան փոթորիկները, անձրևները, հնարավոր է երկրաշարժ եղավ. ավազի վրա կառուցած տունը միանգամից քանդվեց, իսկ ժայռի վրայինը՝ չքանդվեց, որովհետև ամուր հիմքի վրա էր: Նայի՛ր՝ որտեղ ես կառուցում քո տունն այսօր:

Նայի՛ր և քննի՛ր քո կյանքը, ո՞ր նավի մեջ ես գտնվում: Միգուցե «Տիտանիկի՞», որը չի լսում փողի ձայնը և գնում է խորտակման: Գուցե «Կալիֆորնիայի՞», որը բաց թողեց օգնելու հնարավորությունը: Միգուցե գտնվում ես «Կարպատիայի» մե՞ջ, որը փրկված լինելով, շտապում է՝ ուրիշներին փրկելու: Եվ եթե դու այդտեղ ես, եղի՛ր օրհնված: «Կարպատիային» նմանեցնում են Նոյան տապանին. ով մտավ նրա մեջ, փրկվեց:

Հիսուսին ապավինողների մասին այսպես է ասում Տիրոջ Խոսքը.

«Ամուր աշտարակ է Տիրոջ անունը, Նրա մեջ է փախչում արդարը և ապաստան գտնում»

(Առակ. 18.10):

Մի կին ինձ ապացուցում էր, որ շնություն անելը մեղք չէ: Նա ասաց. «Ես սիրեկան ունեմ, բայց Աստծուն նույնպես հավատում եմ»: Նա, ըստ Աստծո Խոսքի, շնության մեջ էր: Նրան ասացի. «Գիտե՞ս որն է մեր տարբերությունը. ես ապաստան եմ գտնում Տիրոջ մեջ և հեռանում եմ մեղքից, իսկ դու ապաստան չես

գտնում Տիրոջ մեջ ու գնում ես դժոխք»:
Աստծո խոսքն ասում է. «Նրա մեջ է փախչում
արդարը» և մեղքից հեռանում: Աստծո խոս-
քուն գրված է.

«Տե՛ր, ո՞վ է կանգնում Քո խորանում, և ո՞վ
է բնակվում Քո սուրբ սարում. ուղիղ գնա-
ցողը, արդարություն գործողը և իր սրտում
ճշմարտություն խոսողը»

(Սաղմ. 15.1):

«ԲԱՐՁՐՅԱԼԻ ԾԱԾԿՈՑԻ ՏԱԿ»

«Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում: Ես կասեմ Տիրոջը. «Ի՛նչ ապավեն և ի՛նչ ամրոց, ի՛նչ Աստված, Որին ես հուսացած եմ»: Որովհետև Նա կփրկի քեզ որսողի որոգայթից, չար ժանտամահից: Նա կծածկի քեզ Իր փետուրներով, Նրա թևերի տակ ապահով կլինես. Նրա ճշմարտությունը ասպար է և զրահ: Դու չե՛ս վախենա գիշերվա զարհուրանքից, այն նետից, որ թռչում է ցերեկը, այն ժանտախտից, որ խավարում շուռ է գալիս, այն հարվածից, որ սատկեցնում է կեսօրում: Հազար հոգի քո կողմից կընկնեն, և տասը հազարը՝ քո աջ կողմից, բայց քեզ չի՛ մոտենա: Միայն քո աչքերով կնայեն և ամբարիշտների հատուցումը կտեսնեն: Որովհետև Դու ես, Տե՛ր, իմ հո՛ւյսը, դու Բարձրյալին քեզ ապավեն արիր: Քեզ չար բան չի՛ հասնի և նեղություն չի՛ մոտենա քո բնակարանին: Որովհետև Իր հրեշտակներին հրամայել է քեզ համար, որ պահեն քեզ քո բոլոր ծանապարհներում: Նրանք ձեռքերի վրա կառնեն

քեզ, որ քո ոտքը քարին չդիպչի: Առյուծների
և իժերի վրա կգնաս, առյուծի կորյուններին
և վիշապին ոտով կոխ կտաս: Որովհետև նա
Ինձ ցանկացավ, և ես կփրկեմ նրան. ես
բարձր կանեմ նրան, որ նա ճանաչում է Իմ
անունը: Նա կկանչի դեպի Ինձ, և ես կլսեմ
նրան. ես նրա հետ կլինեմ նեղության մեջ,
կապրեցնեմ նրան և փառավոր կանեմ նրան:
Երկայն օրերով կկշտացնեմ նրան, և Իմ
փրկությունը ցույց կտամ նրան»

(Սաղմ. 91):

Այս սաղմոսում Աստծո խոստմունքն է, թե ինչ
կլինի Իրեն հավատացողներին, այն մարդ-
կանց, ովքեր Հիսուսի մեջ են, ովքեր բնակվում
են Բարձրյալի ծածկոցի տակ, որն ուղղակի
փրկարար նավ է, ինչպես «Կարպատիան»: Եթե
դու քեզ նետես օգնող նավի մեջ, դու երբեք
«Տիտանիկի» մեջ չես լինի, որը այս խորտակ-
վող աշխարհի խորհրդապատկերն է:

Տերն է քո բարի Հովիվը: Ո՛չ մի հորոսկոպ,
ո՛չ մի վիշապ, ո՛չ մի առնետ, կամ որևէ այլ
կենդանի, իշխանություն չեն ունենա քեզ վրա:
Հիսուսն ասաց. «Ես եմ Հարությունը և Կյան-
քը: Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի»
(Հովհ. 11.25):

Մենք չենք մեռնում, մենք փոխադրվում ենք նոր կյանք: Եթե մեկը ապրում է մեռնելու համար, ապա մենք մեռնում ենք ապրելու համար: Օրերից մի օր կգա ժամանակ, երբ դու Աստծուն ծառայելի կավարտես, երկրի վրա աշխատանքի կվերջացնես և կասես՝ գնալը լավ է ինձ համար, ինչպես ասում էր Պողոս առաքյալը: Եվ կթողնես մարմնիդ պատյանը և մեկ վայրկյանում կհայտնվես այնտեղ, որը պատրաստել ես քեզ համար երկրային կյանքիդ օրերին:

Աստվածաշնչում գրված է.

«Տերն է իմ Հովիվը, և կարոտություն չեն ունենա: Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ է տանում ինձ, իմ անձին հանգիստ է տալիս, ինձ առաջնորդում է արդարության շավիղներում Իր անվան համար: Թեև գնամ մահի շուքի ձորում, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես, Քո գավազանն ու Քո ցուպը՝ նրանք մխիթարում են ինձ: Դու իմ առաջ սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց, Դու իմ գլուխն օծում ես յուղով, իմ բաժակը խիստ լիքն է: Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ

կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը
կրճակվեն շատ երկար ժամանակ»

(Մատթ. 23.1-6):

Մենք պիտի հավատանք, որ Հիսուսն է մեր
Տերը, և ուրիշը մեզ պետք չէ:

Մեկ անգամ մեկը ինձ հարցրեց. «Կենդա-
նակերպի ո՞ր նշանի տակ ես դու ծնվել»: Ես
պատասխանեցի. «13-րդ»: Նա ասաց. «Պա
սուտ է, 13-րդ գոյություն չունի, կա միայն 12
կենդանակերպի նշան»: Ես նրան ասացի.
«Պիտե՞ս, կային մոզեր, նրանք այն մարդիկ
էին, ովքեր ուսումնասիրում էին երկինքն ու
աստղերը: Երբ նրանք երկնքում տեսան մի
մեծ աստղ, թողեցին մնացած աստղերը և
եկան Բեթղեհեմ՝ երկրպագելու ամենամեծ
Աստղին, Որի անունն է Հիսուս Քրիստոս»:

Շատ աստղեր, շատ աստվածներ իրենց
շատ են մեծացրել, մտածում են, որ իրենք
շատ պաշտպանված են, շատ մեծ են և երբեք
չեն ընկնի:

Կար մի խումբ՝ կոչվում էր «Բիթըլզ»: Հան-
րաճանաչ դառնալով և իրենց փառքի գա-
գաթնակետին հասնելով՝ այդ տղաները շատ
հպարտացան: Նրանք մտածեցին, որ շատ են

մեծացել, լավ պաշտպանված են, երբե՛ք չեն «խորտակվի»: Բայց այդ խումբը քայքայվեց: Խմբի անդամներից մեկը՝ Ջոն Լենոնը, որը երգում էր. «Սո՛ւտ է, չկա ո՛չ մի Աստված, ո՛չ մի դրախտ, դրանք միայն երազանքներ են, չկա՛ն ոսկե ճանապարհներ», մի հարցազրույցի ժամանակ ասել էր. «Մենք ավելի հայտնի ենք, քան Հիսուսը»: Նա իրեն շատ մեծ էր պատկերացնում և շատ պաշտպանված: Վերջերս լսեցի նրա հարցազրույցը, թե ինչ պետք է աներ ծերության ժամանակ: Բայց նա չհասավ դրան, երիտասարդ տարիքում սպանվեց իր իսկ երկրպագուի ձեռքով:

Շատ տիտանիկներ այսօր խորտակվում են, շատերն էլ գնում են խորտակման: Միացյալ Նահանգներում հանդիպեցի ինկեր, մայաներ, աստեկներ ազգերի մի քանի ներկայացուցիչների: Միջնադարում նրանք պաշտում էին կուռքերին և մտածում էին, որ իրենք շատ մեծ են: Նրանք հայտնի են եղել իրենց մշակույթով, սակայն ո՞ւր են հիմա այդ ազգերը, ո՞րն է նրանց պաշտպանությունը: Շատ տիտանիկներ դեռ կխորտակվեն: Բայց այսօր ժամանակը եկել է, որ դուրս գաս «Տիտանիկից» կամ «Կալիֆորնիայից» և տեղավորվես «Կարպա-

տիա» նազի մեջ, որտեղ գտնվողները աղոթում են, գործում են և փրկում:

«Տե՛րն է իմ Լույսը և իմ Փրկությունը, ես ունի՞ց պիտի վախենամ: Տե՛րն է իմ կյանքի Ջորությունը, ես ունի՞ց պիտի սարսափեմ: Չարերն ինձ վրա են գալիս, որ իմ մարմինն ուտեն, իմ նեղացնողներն ու թշնամիները սահում են և վայր ընկնում: Թեև զորաբանակ էլ ինձ դեմ բանակ տա, իմ սիրտը չի վախենա, թեև պատերազմ էլ վեր կենա ինձ դեմ, ես դարձյալ կհուսամ: Մեկ բան եմ խնդրում Տիրոջից, և այն շատ կփափագեի, որ Տիրոջ տանը բնակվեմ իմ կյանքի բոլոր օրերում, որ Տիրոջ գեղեցիկ փառքը տեսնեմ և Նրա տաճարին զննելով՝ մտիկ տամ: Որովհետև չար օրում ես ծածկում է ինձ Իր խորանի մեջ, ես թաքցնում է ինձ Իր խորանի ծածուկ տեղերում և բարձրացնում է ինձ վեմի վրա: Եւ հիմա իմ գլուխը կբարձրանա իմ թշնամիների վրա, որ իմ չորս կողմով կան: Եւ Նրա խորանի մեջ գոհության պատարագներ կմատուցանեն, կերգեն և սաղմոս կասեն Տիրոջը: Լսի՛ր, Տե՛ր, իմ ծայնը, երբ որ կանչեմ, և ողորմի՛ր ինձ: Իմ սիրտն ասում է Քեզ Քո խոսքը, թե՛ խնդրեք Իմ երեսը: Ահա՛ Տե՛ր, ես էլ խնդրում եմ Քո երեսը:

Մի՛ ծածկիր ինձանից Քո երեսը, մի՛ մերժիր ծառայիդ Քո բարկությունով. Դու ես իմ օգնությունը. մի՛ հեռացրու ինձ և մի՛ թող ինձ, ո՛վ իմ փրկության Աստված: Թեև հայրս ու մայրս թողեն ինձ, բայց Տերն ընդունում է ինձ: Սովորեցրո՛ւ ինձ, Տե՛ր, Քո ճանապարհները, և առաջնորդի՛ր ինձ ուղիղ ճանապարհում իմ թշնամիների պատճառով: Մի՛ մատնիր ինձ իմ նեղացնողների կանքին, որովհետև սուտ վկաներ են կանգնում ինձ դեմ, որ անօրինություն են փչում: Իսկ թե որ ես հաստատ չհավատայի, թե Տիրոջ բարությունը կտեսնեն կենդանյաց երկրում... Սպասի՛ր Տիրոջը, թո՛ղ սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասի՛ր Տիրոջը»

(Սաղմ. 27):

Գցի՛ր քեզ Հիսուսի ձեռքերի մեջ, որը քեզ ապահովագրում է և ոչ թե խորտակում:

Եթե ուզում ես ընդունել Հիսուսին որպես քեզ Տեր և Փրկիչ, այսօ՛ր, հենց այս պահին կարող ես աղոթել և քո կյանքը նվիրել Հիսուսին: Աստժո խոսքն ասում է. **«Եթե սրտովդ հավատաս և շուրթերովդ դավանես, կփրկվե՛ս»** (Հռոմ. 10.9): Դե՛ ինչ, եթե սրտովդ հավատում ես Հիսուսին, քեզ մնում է դավանել, այսինքն՝ աղոթել:

Աղոթի՛ր այսպես.

*Հայր, ես խոնարվում եմ Քո առջև,
խնդրում եմ ների՛ր իմ բոլոր մեղքերը,
որոնք ես գործել եմ գիտակցաբար
կամ անգիտակցաբար:
Ես հավատում եմ Հիսուսի արյանը,
որը թափվեց ինձ համար,
որը սրբում է ինձ բոլոր մեղքերից:
Ընդունի՛ր ինձ Քո արքայության մեջ:
Հիսուս Քրիստոս, Դու եղի՛ր իմ Տերը,
ես իմ կյանքը Քե՛զ եմ տալիս: Դու՛ ես իմ
Ապավենը և ինձ Ձորացնողը: Խնդրում եմ,
սովորեցրո՛ւ ինձ այս կյանքում ճիշտ
ապրել և լցրո՛ւ ինձ Սուրբ Հոգով:*

Եթե դու սրտանց աղոթեցիր այս աղոթքը, դու փրկված ես, և հիմա երկնքում հրեշտակները, պար բռնած, ուրախանում են քեզ համար, որովհետև քո անունը գրվեց Կյանքի գրքում. այդպես է վկայում Աստծո խոսքը:

Աստված օրհնի՛ քեզ: Գտի՛ր եկեղեցի, ճշմարիտ հավատացյալների հավաքույթ և կարդա՛ Աստծո խոսքը: Ապրի՛ր Աստծո և մարդկանց համար:

Քո եղբայր և ընկեր՝ Արթուր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փրկության կարիքը	4
Ամենապաշտպանվածը և ամենաապահովը...	10
«Բարձրյալի ծածկոցի տակ»	23

